ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ. Հայաստանի կոմպոզիտորների միություն-85, Ե., «Գիտություն» հրատ., 2017, 96 էջ:

Հայաստանի կոմպոզիտորների միությունը 2017 թվականին բոլորեց իր հիմնադրման 85-ամյակը: Միության համագումարները, պլենումները, հայ երաժշտության տասնօրյակները, փառատոները, մրցանակաբաշխությունները, ստեղծագործական երեկոները, նոր ստեղծագործությունների քննարկումները և մի շարք այլ միջոցառումներ, ինչպես նաև ՀԿՄ «Դիլիջան» ստեղծագործական տան Բեթհովենի անվան համերգային դահլիճը (1984 թ.) մեծապես նպաստել են հանրապետության երաժշտական կյանքի աշխուժացմանը և ժամանակակից հայ երաժշտության պրոպագանդմանը:

Միությունը ստեղծվել է 1932 թ. մայիսի 9-ի ՀԿ(բ)Կ Կենտկոմի «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշմամբ, համաձայն որի՝ վերացվել է Հայաստանի պրոլետարական երաժիշտների ասոցիացիան, և Խորհրդային Հայաստանի երաժիշտների միասնական միության կազմակերպման համար ձևավորվել հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ա. Ոսկերչյան (նախագահ), Կ. Զաքարյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Հ. Ստեփանյան, Հ. Եղիազարյան, Ս. Գասպարյան, Ռ. Մելիքյան, Մ. Աղայան: Միության նպատակն էր համախմբել կոմպոզիտորներին սոցիալիստական շինարարության շուրջ և նպաստել նրանց ստեղծագործական զարգացմանը: Նորաստեղծ միության ակունքներում կանգնած գործիչները գիտակցում էին, որ այն պետք է ակտիվ համագործակցի հանրապետության երաժշտական կոլեկտիվների հետ՝ ինչ-որ առումով ուղղորդելով նրանց աշխատանքները: Միության աշխատանքները ղեկավարել են Արտաշես Ոսկերչյանը, Մուշեղ Աղայանը, Հարո Ստեփանյանը, Աշոտ Սաթյանը, Գրիգոր Եղիազարյանը, Ղազարոս Սարյանը, Էդվարդ Միրզոյանը, Ռոբերտ Ամիրխանյանը: 2013 թվականից ՀԿՄ նախագահն է Արամ Սաթյանը:

Միության անդամները մասնակցել են արտասահմանում կայացած տարբեր միջոցառումների՝ փառատոների, կոնֆերանսների, հեղինակային հա-

մերգների, կոնգրեսների, կոլոկվիումների, մշակույթի օրերի, փոխադարձ հանդիպումների, հյուրախաղերի, մրցույթների և այլն: Հայ կոմպոզիտորների գործերը հնչել են աշխարհի տարբեր երկրներում. դրա շնորհիվ աճել է հայ երաժշտության միջազգային ճանաչումը: ՀԿՄ-ն հյուրընկալել է իր արտասահմանցի գործընկերներին, սերտորեն համագործակցել է հանրապետության առաջատար երաժշտական կոլեկտիվների և մենակատարների հետ: Բեղմնավոր է եղել նաև երաժշտագիտական գործունեությունը. ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ ակտիվ համագործակցության շնորհիվ գումարվել են գիտական նստաշրջաններ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային հանձնաժողովի հետ համատեղ կազմակերպվել միջազգային գիտաժողովներ:

Այսօր 85-ամյա միությունը, որը միավորում է հայաստանաբնակ և սփյուռքահայ պրոֆեսիոնալ մեր առաջատար կոմպոզիտորներին և երաժշտագետներին, ապրում է ստեղծագործական լիարյուն կյանքով: Այդուհանդերձ, մինչ օրս Հայաստանի կոմպոզիտորների միության գործունեության վերաբերյալ չկար ամփոփ մենագրություն, ավելին՝ չկային անգամ առանձին հոդվածներ:

ՀԿՄ հոբելյանի առիթով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության որոշումներով ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, երաժշտության բաժնի վարիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի «Հայաստանի կոմպոզիտորների միություն-85» վերնագրով՝ միության գործունեության 85-ամյա պատմությունը ներկայացնող գիտական առաջին մենագրությունը, որը հեղինակը սիրով նվիրել է «հայ երաժշտության անխոնջ մշակներին՝ հայ կոմպոզիտորներին և երաժշտագետներին, որոնք ստեղծագործական և կազմակերպական անդուլ աշխատանքով ու անմնացորդ նվիրումով նպաստել ու նպաստում են հայ երաժշտարվեստի զարգացմանը, իրենց հարազատ օջախի՝ Հայաստանի կոմպոզիտորների միության առաջընթացին» (էջ 5):

Արխիվային նյութերի, օտարալեզու սկզբնաղբյուրների և մամուլից քաղված տեղեկությունների հիման վրա հեղինակը թերթում է ՀԿՄ ստեղծման 85-ամյա պատմության էջերը՝ հետամուտ լինելով նրա անցած պատմական ուղու ելևէջներին և համառոտ շարադրում միության անցած արդյունաշատ ուղին, գործունեության ընթացքում արձանագրված ձեռքբերումները:

Մենագրության կառուցվածքը կուռ է և տրամաբանական: Բովանդակությանը համապատասխան՝ այն բաղկացած է հինգ գլուխներից:

Առաջին գլխում՝ «Հայաստանի կոմպոզիտորների միություն. հիմնադրումը և կայացումը», Ա. Ասատրյանը հանգամանորեն ներկայացնում է միության հիմնադրման շարժառիթները, շարադրում կազմակերպության հիմնախնդիրները, փաստագրական նյութով բացահայտում և անդրադառնում նրա առաջին ղեկավարի՝ Արտաշես Ոսկերչյանի գործունեությանը, որ ղեկավարել է միության աշխատանքները մինչև 1935 թ.: Հեղինակը ներկայացնում է Հ. Ստեփանյանի և վարչության ձևավորած ավանդույթները, որոնք հետագայում առանցքային նշանակություն էին ունենալու միության գործունեության համար՝ երաժշտության պրոպագանդան Հայաստանից դուրս, երաժշտագիտական մտքի զարգացման կարևորությունը, կոմպոզիտորների ստեղծագործական երեկոների կազմակերպումը: Առանձնացվել և ներկայացվել են Հայրենական մեծ պատերազմի տարիներին ստեղծված սիմֆոնիկ, կամերային օպերայի և բալետի արժեքավոր երկերը, կարևորվել է Արամ Խաչատրյանի կողմից Հայկական ԽՍՀ պետական հիմնի ստեղծումը (1944):

Երկրորդ գլխում՝ «Հայաստանի կոմպոզիտորների միությունը վերելքի ճանապարհին» (1941-1947 թթ.), Ա. Ասատրյանն անդրադարձել է Հայաստանի կոմպոզիտորների միության և ՀԽՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորների միջև համագործակցության սկզբնավորմանը, խորհրդային կոմպոզիտորների հետ կապերի ամրապնդմանը, հայ երաժշտության տասնօրյակներին, կոմպոզիտորների նոր ստեղծագործությունների ունկնդրումներին, ստեղծագործական և հուշ երեկոներին, Հայաստանից դուրս հայ երաժշտության ներկայացմանը: Հեղինակը նշում է. «Զգալի է Աշոտ Սաթյանի դերը կոմպոզիտորների միության առաջընթացի գործում: Շարունակելով և խորացնելով Հ. Ստեփանյանի ավանդույթները՝ նա հանդես է գալիս մի շարք նախաձեռնություններով, որոնք Միության տարեգրության մեջ են մտնում «Առաջին անգամ» խորագրով» (էջ 28): Հեղինակը նշում է ինչպես Ա. Սաթյանի պաշտոնավարման հնգամյակում հայ կոմպոզիտորների համամիութենական ճանաչման շեշտակի աճը, այնպես էլ Գր. Եղիազարյանի պաշտոնավարման ընթացքում միության բեղմնավոր գործունեությունը:

Երրորդ՝ «Հայրենական երաժշտարվեստի առաջընթացի խթանման դիրքերում. Հայաստանի կոմպոզիտորների միության պատմության ծաղկման շրջանը» գլուխը նվիրված է Էդ. Միրզոյանի պաշտոնավարման տարիներին՝ 1956-1991 թթ., երբ մեծ արդյունավետությամբ էր աշխատում միության վարչությունը. «Վարչության նիստերում քննության են առնվում Միության գործունեության բոլոր ոլորտները՝ համագումարների, պլենումների, փառատոների, սիմպոզիումների, գիտական կոնֆերանսների կազմակերպում, երաժշտութ-

յան օրեր, Անդրկովկասի կոմպոզիտորների ավանդական հանդիպումներ Խորհրդային բանակի մարտիկների հետ, հանրապետական մանկապատանեկան երաժշտական շաբաթներ, մրցույթներ, հեղինակային և հոբելյանական երեկոներ, փոխանակային համերգներ, սեմինարներ, ստուգատեսներ» (էջ 44-45): Ի դեպ, այս շրջանում ակտիվ են գործում ստեղծագործական սեկցիաներն ու հանձնաժողովները, ստեղծվում է լրատվական «Вестник» տեղեկագիրը (1975-1991 թթ.), որն արձանագրում էր միության կարևոր իրադարձություններն ու փաստերը, շարունակվում է հայ երաժշտության պրոպագանդումը Հայաստանում և արտերկրում, աճում է հայ երաժշտության միջազգային ճանաչումը, միության անդամների արտասահմանում կայացած տարբեր միջոցառումների մասնակցությունը, շարունակում են երիտասարդ տաղանդների բացահայտմանն ու խրախուսմանն ուղղված աշխատանքները, արգասավոր է դառնում համագործակցությունը ՀՍՍՀ արվեստի ինստիտուտի հետ, սերտ կապեր են հաստատվում Սփյուռքի երաժշտական կազմակերպությունների և երաժշտական գործիչների հետ և այլն: Միությունը դառնում է ԽՍՀՄ կոմպոզիտորների առաջատար ջոկատներից մեկը. ԽՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում ստացած 98 կոմպոզիտորներից 10-ը հայեր էին: Ա. Ասատրյանը նշում է. «Է. Միրզոյանի ղեկավարության տարիներին տեղի են ունենում տարբեր, բայց գործնականում սերտորեն փոխկապակցված երկու գործընթացներ: Մի կողմից՝ Հայաստանի կոմպոզիտորների միությունը հաջողությամբ ինտեգրվում է համամիութենական կոմպոզիտորական կազմակերպության համակարգում (կառուցվածքային, կազմակերպական, ստեղծագործական), իսկ մյուս կողմից՝ առանձնանում իր ստեղծագործական ինքնատիպությամբ, ազգային ուրույն դիմագծով» (էջ 46): Այս գլխում արժևորվել է Արամ Խաչատրյանի՝ Միությանը ցուցաբերվող անգնահատելի համակողմանի օգնությունն ու աջակցությունը, նրա մեծ դերը առաջընթացի բոլոր փուլերում:

Չորրորդ գլխում՝ «Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության գոյատևումն ու պահպանումը», հեղինակը ներկայացնում է 1991-2013 թթ. Ռոբերտ Ամիրխանյանի պաշտոնավարման ժամանակահատվածը: Հեղինակն անդրադառնում է միության առջև ծառացած խնդիրներին ու անելիքներին, միջոցառումներին ու ծրագրերին:

Հինգերորդ գլխում՝ «Հայաստանի կոմպոզիտորների միությունը վերածննդի ուղիներում», հեղինակն անդրադառնում է միության գործունեությանն Արամ Սաթյանի ղեկավարության տարիներին՝ 2013-2017թթ.: Նա քննության է առնում հայ ժամանակակից երաժշտության և երիտասարդ կոմպոզիտորների կամերային ստեղծագործություններին նվիրված «Դեբյուտ» փառա-

տոները, նրանցում ընդգրկված կոմպոզիտորների ստեղծագործությունները, կոլեկտիվների և մենակատարների ելույթները, ինչպես նաև նշում միջազգային շփումների և համագործակցության վերահաստատումը, անդրադառնում սփյուռքահայ և արտասահմանյան կառույցների հետ արդյունավետ համագործակցությանը, մրցույթներին և մրցանակաբաշխություններին, կարևորում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ միության համագործակցության վերականգնումը, սեկցիաների և հանձնաժողովների աշխատանքը: Ա. Ասատրյանը եզրակացնում է, որ երաժշտական արվեստի կարևոր արժանիքներից մեկը դարձած կազմակերպությունը տասնամյակներ շարունակ եղել է ու պիտի կրկին դառնա հայ երաժշտական մշակույթի ամուր ողնաշարը՝ համախմբելով ինչպես պրոֆեսիոնալ կոմպոզիտորների և երաժշտագետների, այնպես էլ կատարողների:

Մենագրության հինգ գլուխներում՝ խորհրդանշական 85 էջի սահմաններում, հեղինակն առանձնացրել և քննության է ենթարկել միության յուրաքանչյուր ղեկավարի և վարչության իրականացրած ստեղծագործական գործունեության կարևոր ուղղություններն ու ձեռքբերումները, համագումարներն ու պլենումները, համերգներն ու մրցույթները, մրցանակաբաշխությունները, համագործակցության ծրագրերը և այլն, նշել յուրաքանչյուրի նորամուծությունները, շարադրել առաջացած խնդիրներն ու անելիքները, անդրադարձել ունկնդրումներին և համերգներին ներկայացված ստեղծագործություններին և հանգել երաժշտագիտական ընդհանրացումների:

Կոմպոզիտորների միության պատմության ուսումնասիրության հիման վրա Ա. Ասատրյանը եզրակացնում է. «Միությունը շարունակում է իր արգասավոր գործունեությունը՝ հանուն հայ երաժշտության առաջընթացի, ի շահ երաժշտարվեստի զարգացման» (էջ 93): Ապա՝ «Բնականաբար հետագայում նորից անդրադարձ կլինի Միության պատմության է՛լ ավելի լրացված, առավել հարստացված: Ու թող իմ այս անդրանիկ փորձը հետագայում օգնի, հիմք դառնա ամբողջական ու լիակատար պատմության շարադրման համար՝ առանձին գրքի տեսքով, որտեղ ավելի հանգամանորեն կլուսաբանվեն նրա անցած ուղին և ձեռքբերումները, կնախանշվեն հետագա անելիքները» (էջ 93-94):

Աշխատության անվիճելի արժանիքներից է կարևորագույն փաստերի և նյութերի հագեցած ընդգրկումով կոմպոզիտորների միության ստեղծագործական գործունեության պատմական առանցքային փուլերի տրամաբանական հակիրճ շարադրանքի կուռ կառուցվածքը, որը հնարավորություն է ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու միության 85-ամյա գործու-

նեության հիմնական ուղղությունների, նպատակների, խնդիրների և բնագավառում ձեռք բերված նվաճումների վերաբերյալ:

Մենագրությունը ժամանակակից երաժշտության պատմության ուսումնասիրության գործում, անկասկած, կարևոր ներդրում է, որը, կարծում եմ, կնպաստի Կոմպոզիտորների միության գործունեության և հայ ժամանակակից երաժշտության պրոպագանդմանը Հայաստանում և արտերկրում:

Ա.Ասատրյանի մենագրությունը (շապիկի ձևավորումը՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մարտին Հարությունյանի) ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի յուրահատուկ նվերն է Հայաստանի կոմպոզիտորների միությանը՝ հոբելյանի առթիվ:

Հ.Գ. Գրախոսվող աշխատությունն արժանացավ Հայաստանի կոմպոզիտորների միության «Տարվա լավագույն ստեղծագործություն-2017» մրցանակին՝ «Երաժշտագիտություն» անվանակարգում:

Սրտանց շնորհավորում ենք Ա. Ասատրյանին և մաղթում նորանոր հաջողություններ՝ ի նպաստ հայրենական երաժշտագիտության զարգացման:

ԱՐՏԵՄՅԱՆ Լ.Ռ.
Արվեստագիտության թեկնածու